№ 27. ՇԱԲԱԹ 1883 2 ԱՊՐԻԼԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հրատարակւում է շաբաթը երեք անգամ:

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 1 րուբ.

ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրատունը բաց է 2—5 ժամը կէս օրից յետոյ:

Յայտարարութիւնները ընդունւում են հայերէն, ռուսերէն և Թաթարերէն լեզուներով:

Յայտարարութիւնների համար վճարւում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — մի անգամ, 3 կոպ. — երկու անգամ և 3½ կոպ, — երեք կամ աւելի անգամ տպագրելու համար:

Խմբագրատունը գտնւում է Երևանում, Աստաֆեան և Բէհբութեան փողոցների անկիւնում, Եմին Տէր Գրիգորեանցի տպարանում:

ԼՈՒՐԵՐ

Մարտի 31-ի առաւօտը, շատ կարճատև հիւանդութիւնից յետոյ, տեղւոյս նահանգական բժիշկ Գուլբինսկին կնքեց իւր երկրաւոր կեանքը։ Հանգուցեալը երախտիքը մեր Երևանի հասարակութեան վերայ շատ էր։ Թէ աղքատ և թէ հարուստ համարեա մուտք ունէր նորա մօտ. հաւասարապէս դարման և կարեկցութիւն էր գտնում նորանից։ Նա իւր խոհեմ և անշահասէր կենցաղավարութիւնով սիրելի և յարգելի էր մեծից և փոքրից, հարուստից և աղքատից։ Դեռ շատ ժամանակ նորա բարի յիշատակը անջնջելի է մնալու Երևանի հասարակութեան սրտում։

—

Լսում ենք, որ Մեր քաղաքային վարչութեան կարգադրութեամբ քաղաքային զբօսարանում տնկած փշատենիները վերջը հանել տալիս են։

—

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ԵՒ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶՐՈՅՑՆԵՐ

Մարդ ու կին մտածում են թէ ի՞նչ հնարքով իրենց ծոյլ հարսին ջուրն ուղարկեն։

—Ես կուժը կվերցնեմ, որպէս թէ ջուրն եմ գնում, ասում է մարդը, իսկ դու ասա. այ մարդ, ամօթ է. ես կերթամ, որպէս զի հարսն ամաչի. ու ինքը գնայ։

Այդպէս էլ արեցին։

—Քա, կարմուէք դուք, ասաց հարսը սկեսուրին և սկեսրին, ի՞նչի էք կռւում. մէկդ իրիկունը գնացէք՝ մէկդ էլ առաւօտը։

Պարտիզպան:

* * *

Քուրդը հացը կռնատակին անցնում է կաշկակարի խանութի առաջից և կաշկակարի թաջած կաշիների կարմիր ջուրը տեսնելով ամանում, կարծում է թէ դոշաբ է։

—Ուստա, մի շահի էս դոշաբից տուր։ Ճարպիկ ուստէն իսկոյն մի աման լցնում է և տալիս քրդին, քուրդը հացը փրթում է և սկսում ուտել։ Վերջացնելուց յետոյ ասում է.—Ուստա, չի ասես քուրդը էշ էր չի հասկացաւ. դոշաբդ շատ անհամն էր։

* * *

Ծառան ներս մտնելով ասաց.

—Աղա, խոհանոցը և պահարանը կրակ է ընկել և այրւում է, հասիր օգնութիւն.

—Անպիտան, դու գիտես, որ ես տնային գործերով չեմ զբաղւում, պատասխանեց բարկանալով աղան, այդ մասին յայտնիր տիկնոջս։

Գէորգ:

* * *

—Կիրակոս եղբայր այդքան հայհայութիւն մի անիր, թէ չէ դժողքը կերթաս.

—Ես էլ հենց էդ եմ ուզում, Մաթոս. ինչքան ուտող, խմող, քէֆ անող լոթի, դարդիման ազերք կան՝ էնտեղ են, ես, հօ, ճգնաւորների թայը չեմ։

Պարտիզպան:

ՓՈՍՏԱՐԿՂ.

ԴԱՒՐԷԺ. Ա. Դ. Գալստեանց. Թէև ուղարկում ենք „Ընթերցասիրաց ընկերութեան„ թերթիս միայն չսպառւած համարները, բայց կասկածանաց մէջ ենք. մի գուցէ կրկին Պարսկաստանի փոստը կողոպտւի և այս համարները չհասնի նոյն ընկերութեան։

ՎԱՃԱՌԱՆՈՑ

	Ր.	Կ.
Ցորեն 1 տեսակի, խալւարը	24	
„ 2 — — ,	22	
„ 3 — —	20	
Գարի, խալւարը	14	
Բրինձ, լիտրը		50
Շաքար, փութը	9	75
Բամբակ, տեղական սերմից	2	10
„ ամերիկ. սերմից	2	40
Բուրդ, լիտրը	2	
Չամիչ, խալւարը	80	
Հաւ		50
Հնդկահաւ	2	
Կաքաւ		30
Ձէթ կտաւատի ֆ.		18
Ճիլլախոտ, ֆ.		20
Ածուխ, տաշտակը		90
„ լիտրը		
Ձուկը, ջանդարի ֆ.		20
„ Սևանայ ֆ.		14
Ձու 100ը	1	30

ՕԴԱՑՈՅՑ

31 ին ՄԱՐՏԻ

Առաւօտ	Կէս օր	Երեկոյ
ամպ		
Րէօմիւրի ջերմաչափով		
+9	+13	+8

1 ին ԱՊՐԻԼԻ

Առաւօտ	Կէս օր	Երեկոյ
ամպ		
Րէօմիւրի ջերմաչափով		
+9	+13	+9

ՕՐԱՑՈՅՑ

Հ.	Օ.	ԱՊՐԻԼ	Ն.	Լ.
Իե	2	Շբ. Դ. կղ. օր մ. պհ: Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի մտանելն ի Վիրապն: Օհ. ֆէ. Այսօր զատկանցեալ. օր: (ջինի Պատարագին ծածկեսցի սեղանն յորում սրբատարագեսցի) Հմբ. Բյ. Որ զվարշարդ քո դաւանեան. օր. Յ Առ. քա. ժ. 7, ր. 36: Պարզ:	14	7
Իզ	3	✠ Կիր. Բյ. Զ. Քառասնորդական պհ: Գալստեան Օհ. Բյ. Որ զվարշարդ քո դաւան. օր:	15	8
Իէ	4	Բշ. Բէ. կղ. օր մ. պհ: Հց. Առջ. Թէ. Ա. Աստուած հարցն մերոց:	16	9

ՄԱՐՏ ԱՄՍԻ ՏԱԿՍԱՆ

	Կ.
ՄԻՍ	
Տաւարի, ֆունտը	10
Ոչխարի —	12
Խոզի —	10
ՀԱՑ	
Հասարակ, լիտրը	26
Ֆօն-դէր-Նօնէի ալիւրից ֆ.	4
ԻՒՂ	
Հալած, ֆունտը	35
Կարագ —	30
Դմակ —	
Ճրագուէ մօմ ֆ.	20
Սապոն, տեղական ֆ.	14
— Թիֆլիզի —	16
Նաւթ ֆ.	6

Ищу попутчика въ Тифлисъ на перекладной на 2, 3 или 4-ое число Апрѣля.

Адресъ: Гостинница „Кавказъ“.

ПРОДАЕТСЯ СКРИПКА

ФАБРИКИ „СТРАДУАРА“

СО СМЫЧКОМЪ

Спросить въ редакціи Эриванскихъ Объявленій.

7—14

ԾԱԽՎՈՒՄ Է

Ջանիբեգ Ղևոնդեան Ջանիբեգեանցի տունը. որ գտնվումէ Շահարում, Ղարիբանցի մօտ. տունն ունի 12 ծածք և երկու պլանաչափ պարտէզ, որոյ մէջ գտնվում են ամենայն տեսակ պտղեղէնի ծառեր. գինն է 2500 Մթ.

ՊՈԼՍԵՑԻ ՄԻ ԺԱՄԱԳՈՐԾ

Գալով Երևան, ընդունում է իւր արհեստին վերաբերեալ պատուէրներ, որը կատարում է ամենակարճ միջոցում և գոհացուցիչ գներով. Իւրեան յանձնուած ժամացոյցի համար երաշխաւորում է վեց ամսեն ժամանակով:

Պատուէրներ ընդունում է պարոնց Միսակի խանութում, Գրիգոր Բաղրամեանի մագազինի հանդէպ: 2—3

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ 1883 ԹՒԻՆ

Հրատարակվում է նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: ընդհանուր՝ յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ֆէլյետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբ. վեց ամսայ 6 ռուբ, իւրաքանչիւր ամսայ 1 ռուբ:

ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ:

ՀԱՍՑԷՆ. Тифлисъ, редакція «Мшакъ»

Խմբագիր – Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԴԱԴԵԱՆՑ

Կարճ միջոցով բաց արի իմ լուսանկարչական արհեստանոցս. ընդունումեմ ամեն տեսակ և զանազան մեծութեան նկարների պատուէրներ, նոյնպէս և նկարումեմ ղալփինկաների վերայ:

Նկարուած պատկերներիս երաշխաւորումեմ թէ մաքրութեան և թէ նըկարի նմանութեան կողմից:

Նկարուիլ կարելի է ամեն օր՝ առաւօտեան ժ. 9 ից—6 ժ.

Արհեստանոցս գտնվումէ „Նաղէժդա„ հիւրանոցի կարգում Սարգիս Աւագովի տանը:

Ամպ օրերը արգելք չեն լինում նկարուելու:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԴԱԴԵԱՆՑ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՄԻԵՒՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Տարեկան բաժանորդագինը 7 ր. կէս տարուանը 4 ռուբ:

ԱՐՁԱԳԱՆՔԻ բաժանորդներն իրաւունք ունին ձրիապէս ստանալ երկու ռուբլու գիրք, ուղարկելով 20 կոպէկի փոստի մարկայ:

Օտարաքաղաքացիք դիմումեն՝ Тифлисъ. Въ Редакцію газеты Арцаганкъ.

Խմբագիր—Հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

Дозволено цензурою 1 Априля 1883 года. Г. ЭРИВАНЬ Типографія Эмина Теръ—Григорянцъ.